## ՈՐՈՇՈՒՄ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

05.10.2020թ. ք. Մասիս

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Կարեն Ստեփանյանս՝ ուսումնասիրելով 15.05.2020թ. հարուցված թիվ 06198642 կատարողական վարույթի նյութերը՝

## ՊԱՐԶԵՑԻ

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված ԱՎԴ2/1232/02/17 կատարողական թերթի համաձայն.

Պետք է՝ Տաթևիկ Սարգսյանից հօգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 409.731 ՀՀ դրամ և տոկոսները:

Պարտապանից բռնագանձել նաև ընդհանուր գումարի 5 տոկոսը՝ որպես կատարողական ծախսի գումար:

Պարտապանի պարտքը 27.05.2020թ-ի դրությամ կազմում է 778.000 դրամ:

23.07.2020թ.-ին ,,ՌԱՖՕԼ,, ՍՊԸ-ից ստացված թիվ Ե-0176/20 եզրակացության հիման վրա պետք է պարտապանի կողմից գրավադրված ոսկյա զարդերը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

## ՈՐՈՇԵՑԻ

Պարտապան Տաթևիկ Սարգսյանին պատկանող հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի Մասիսի բաժանմունքի կողմից արգելադրված ներքոհիշյալ ոսկյա իրերը՝

| հ/հ | լոտի անվանումը, նկարագիրը | գնահատման գինը /դրամ/ | մեկնարկային գինը /դրամ/ | գույքի քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Թենոց -580 Հարգ-29.0 գրամ | 423.400 դր | 317.550 դր. | 1 հատ |

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով: